

Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանը հայտարարում է մարզպետարանում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու մասին

«Լոռու մարզպետարանի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ (65-3.2-50)

Հիմնական գործառույթները՝

ա) իրականացնում է Լոռու մարզի (այսուհետ՝ Մարզ) Սպիտակի տարածաշրջանի մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություններ.

բ) իրականացնում է Մարզի Սպիտակի տարածաշրջանի մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում ավարտական և միասնական քննությունների կազմակերպման, անցկացման և վերահսկմանն ուղղված աշխատանքներ.

գ) իրականացնում է Մարզի Սպիտակի տարածաշրջանի մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների դպրոցականների առարկայական օլիմպիադաների ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերի կազմակերպմանը ուղղված աշխատանքներ.

դ) իրականացնում է Մարզի Սպիտակի տարածաշրջանի մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների դրույքային վարձաչափերի /տարիֆիկացիոն/ մատյանների ուսումնասիրություններ.

ե) իրականացնում է Մարզի Սպիտակի տարածաշրջանում մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների գործունեության կազմակերպման՝ պետական հանրակրթական ծրագրերի իրագործման, ուսումնական հաստատությունների գործունեության վերահսկողությանն ուղղված աշխատանքներ.

զ) իրականացնում է Մարզի Սպիտակի տարածաշրջանում հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ իրավական ակտերի կատարման վերահսկման, կրթական և դաստիարակչական ծրագրերի իրականացմանը ուղղված աշխատանքներ.

է) իրականացնում է Մարզի Սպիտակի տարածաշրջանում դպրոցական տարիքի երեխաների հաշվառման, վերահսկման և նրանց ուսումնական հաստատություններում ընդգրկմանն ուղղված աշխատանքներ.

ը) մասնակցում է Մարզի Սպիտակի տարածաշրջանում դպրոցների կառավարման խորհուրդների ձևավորման աշխատանքներին.

թ) իրականացնում է հաջորդ տարվա բյուջեի հաշվին Սպիտակի տարածաշրջանի մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների պատվիրատվությամբ կատարվող ծախսերի բյուջետային հայտերի կազմումը.

ժ) Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր.

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

- կրթություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ

-սույն պաշտոնի հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն

-համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

-անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում

Դիմող ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են՝ **առձեռն, անձամբ:**

Աշխատանքի վայրը՝ ՀՀ Լոռու մարզպետարան, ք. Վանաձոր Հայքի հրապարակ 1
Դիմող ՀՀ քաղաքացիները ներկայացնում են՝

- գրավոր դիմում ՀՀ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի անունով
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները, բնօրինակի հետ միասին
- աշխատանքային գրքույկի պատճենը, բնօրինակի հետ միասին (գրքույկի բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ կամ այլ փաստաթուղթ/եր (համապատասխան մարմնից/ներից),
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի պատճենը բնօրինակի հետ միասին կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ գունավոր լուսանկար՝ 3X4 սմ չափսի
- անձնագրի պատճենը
- ինքնակենսագրական

Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ընտրություն կատարելու եղանակներն են՝

- դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն.
- ինքնակենսագրականների ուսումնասիրություն:

Պայմանագրի գործողության սկիզբն է՝ 15.11.2019թվականը:

Պայմանագրի գործողության ժամկետն է՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում պաշտոն զբաղեցնելը:

**Աշխատավարձի չափը՝ 150799 (հարյուր հիսուն հազար յոթհարյուր ինսունհինը) ՀՀ դրամ
Փաստաթղթերն ընդունվում են՝ ս/թ նոյեմբերի 12-ից միայն աշխատանքային օրերին՝
ժամը 9.30-ից մինչև 12.30-ը:**

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 14.11.2019թ. ժամը 12.30-ը:

ՀՀ Լոռու մարզպետարանում նշված պաշտոնը զբաղեցնելու համար կարող եք դիմել ՀՀ Լոռու մարզպետարան (ք. Վանաձոր, Հայքի հրապարակ1, հեռ.0322-2-10-24, +37498751530)

Չի թույլատրվում պայմանագիր կնքել, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք: